

ԵՊՏ 6552



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



« 11 » 06 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 079 - 24

Նախաձեռնող՝ «Կառլին» ՍՊԸ  
Սյունիքի մարզ ք.Կապան Շահումյան 1

Գործունեությունը՝ Սյունիքի մարզի Սիսականի գլաքարային ավազի երևակման  
փարածքում 2024-2027թթ կապարվելիք երկրաբանական  
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
Սյունիքի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 079 - 24

«11» հունիսի 2024թ.

**Սյունիքի մարզի Սիսականի գլաքարային ավազի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	«Կառլին» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք Գորայք բնակավայր

**Ներածական մաս.** Սյունիքի մարզի Սիսականի գլաքարային ավազի երևակման տարածքում «Կառլին» ՍՊ ընկերությունը նախատեսում է 2024-2027թթ. իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է՝ ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի №06-Ն հրամանի հավելված 3-ի «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգ հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է բացահայտել տեղամասի արդյունաբերական նշանակությունը, ավազի որակական հատկանիշները որպես հումք շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական աշխատանքների՝ հումքի արտադրության համար:

**Նկարագրական մաս.** Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Սիսիան խոշորացված համայնքի Գորայք բնակավայրի վարչական սահմաններում: Ուսումնասիրվող տարածքի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1,62 հա:

Դիտարկվող տարածքում և շրջակայքում բացակայում են աղբյուրները և ջրային հոսքերը, գրունտային ջրերի ներհոսք ևս չեն դիտվել:

Սիսականի երևակման տարածքում սողանքային մարմինները բացակայում են: Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:





Սիսականի, ինչպես նաև մոտակա Գորայք գյուղի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, երևակման և հարակից շրջանները չեն հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք:

Համաձայն 2021 թվականի օգոստոսի 11-ի N°06-Ն հրամանի Սիսականի երևակումը, ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության դասվում է 2-րդ խմբի 2-րդ ենթախմբին, բոլոր ծագումնաբանական տիպերի ոչ մեծ ուսանյակաձև կամ ոչ կանոնավոր տեսքի հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով և փոփոխական հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները կուսումնասիրվեն՝ ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար. տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 8736-2014 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ԳՈՍՏ տեխնիկական պահանջների:

Սիսականի երևակման երկրաբանական ուսումնասիրության համար ընտրվել են 50-100 մ խտությամբ հետախուզական ցանցը: Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևույթային հետախուզական փորվածքների անցման, փորվածքների և բնական մերկացման փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

X	Y
1. 4393719.8140	8565914.7710
2. 4393698.1090	8566008.1410
3. 4393665.7820	8566121.8490
4. 4393623.8390	8566138.9810
5. 4393593.8260	8566134.9790
6. 4393601.8230	8566119.4510
7. 4393624.2200	8566032.1860
8. 4393634.6170	8565959.7320
9. 4393648.7970	8565934.2100
10. 4393684.5130	8565877.1640
11. 4393687.1730	8565864.9940
1. 4393719.8140	8565914.7710

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում:

Հաշվի առնելով երևակման երկրաբանական կառուցվածքը՝ օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափսերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 15,2 մ խորությամբ 14 հետախուզահորերի միջոցով, հետախուզահորերի կտրվածք կլնի 2x2 մ, հեռավորությունը՝ մեկը մյուսից կգտնվի 12-95 մ սահմաններում: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B կարգով:

Այդ աշխատանքները կիրականացվեն ձեռքով և մեխանիկական եղանակով՝ ընկերության սեփականություն հանդիսացող VERMEER S925TX GB-6523 մոդելի մինի թրթուրավոր ամբարձիչով, որը կահավորված կլինի 4-ը մեկում 1YRL0705Cm1004969 տեսակի շերտիկով: Հետախուզահորերի ընդհանուր խորությունը նախատեսվում է 111,8 մ, ընդհանուր ծավալը՝ 447,2 մ<sup>3</sup>: Աշխատանքների համար ընտրվել է ստորին հորիզոն՝ 2105 մ յուրաքանչյուր հորի խորությունը կհաշվարկվի կապակցված՝ դրա տեղադրիչի

բարձունքային նիշերի հետ:





Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից՝ համախառն եղանակով: Յուրաքանչյուր հետախուզահորից հանված հումքը կլցվի անմիջապես հորի մոտ, կխառնվի ու կքարորդացվի, այնուհետև կվերցվի 25 կգ զանգվածով նմուշ:

Փաստագրվելու է նաև հայցվող տարածքի արևելյան հատվածում գտնվող, բացահանքի անցման արդյունքում ձևավորված մերկացումը: Մերկացման փաստագրման աշխատանքի ծավալը կկազմի 6գծ.մ: Մերկացումը կնմուշարկվի ակոսային եղանակով, ակոսի հատույթը կընդունվի 0,4x0,4 մ: Մերկացումից նախատեսվում է վերցնել 2 նմուշ, որոնք լցվելու են առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու են և ուղարկվելու են լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Նախատեսվում է վերցնել 17 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար (15 համախառն նմուշ հորերից ընդհանուր մոտ 0.525 մ<sup>3</sup> ծավալով և 2 ակոսային նմուշ մերկացումից), 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող բնահողային ճանապարհներով, նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Անհրաժեշտության դեպքում կկատարվի գոյություն ունեցող բնահողային ճանապարհների բարեկարգում «Կառլին» ՍՊ ընկերության միջոցներով:

Հիմնական բնապահպանական ռիսկեր ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կարող են հանդիսանալ՝ հետախուզաառումների տարածքներում բուսականության ոչնչացումը, փոշու արտանետումները՝ հողային աշխատանքների արդյունքում, դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումները, տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկը, ծանր տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քայուղերի արտահոսքերը, որոնց բացառման, նվազեցման ու փոխհատուցման համար նախատեսվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդը հնարավոր աղտոտող հիմնական նյութեր կարող են լինել փոշին և շահագործվող տեխնիկատրանսպորտային միջոցներից առաջացրած ծխագազերը: Փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում հնարավորինս խոնավ եղանակներին և աշխատանքների դադարեցում՝ քամու առկայության դեպքում, չոր եղանակներին գրունտային ճանապարհների վրա մեքենաների երթևեկության առավելագույն արագության սահմանափակում 20 կմ/ժ-ը: Անհրաժեշտության դեպքում ճանապարհների ջրցանում՝ ջրցան մեքենայով չոր եղանակին՝ օրական 2 անգամ, անհրաժեշտության դեպքում կիրառել հակահրդեհային միջոցառումներ:

Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները նախատեսվում է շահագործել սարքին վիճակում, դիզելային շարժիչներով մեքենաների վրա տեսողել ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը կլինի խիստ սահմանափակ, քանի որ երևակման տարածքը նախկինում շահագործվել է և այստեղ ձևավորված է մոտ 1.5 հա մակերեսով խախտված տարածք, որտեղից հողաբուսական շերտը հեռացված է:

Բացված լեռնային փորվածքները, բնապահպանական և անվտանգության նկատառումներից ելնելով, երկրաբանական փաստագրումից, ֆոտո-փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո փակվելու և վերականգնվելու են: Հողի վերին շերտի պահպանության նպատակով հետախուզաառումների անցման ժամանակ հողի շերտը կհանվի և կպահեստավորվի (հողաշերտերը կպահվեն յուրաքանչյուր բացված





հետախուզաառվի անմիջապես հարևանությամբ): Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու: Հետախուզահորերից հանված լեռնային զանգվածը (գլաքարային ավազ) նմուշարկումից հետո հետ է լցվելու հորերի տարածք, կատարվելու է ռեկուլտիվացիա, հետախուզական հորերի տարածքից հեռացվող հողաբուսական շերտը կարճաժամկետ կտրվածքով տեղադրվելու է հետախուզական փորվածքների մոտակայքում, այնուհետև կօգտագործվի ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ: Հորերից հանված 447.01 մ<sup>3</sup> ծավալով նյութը հետ կլցվի, կիրականացվի տարածքի հարթեցում և փխրեցում: Հետլցման և փոխրեցման ախատանքներից հետո կկատարվի նախապես հեռացված հողաբուսական շերտի փուլում փխրեցում, պարարտացում և սերմերի ցանք:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների համար նախատեսված գումարը կկազմի 263.800 ՀՀ դրամ:

Վառելիքի լիցքավորումը, օգտագործված քայուղերի և անհրաժեշտ հատկությունները կորցրած յուղերի փոխարինումը կատարվելու է Գորայք բնակավայրում՝ համապատասխան մասնագիտացված ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Հետևաբար, բուն երևակման տարածքում նավթամթերքներով, դրանց մնացորդներով ներկայացված թափոններ չեն առաջանալու: Առաջանալու է կենցաղային աղբ՝ օրական 10 կգ առավելագույն քանակությամբ, թափոնները կտեղափոխվեն համայնքի մոտակա աղբահավաք կետեր: Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 004:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տեխնիկական միջոցների աշխատանքների արդյունքում առաջացող լրկալ թրթռումը առողջապահական ռիսկեր չի առաջացնի:


Նախատեսվում է նաև իրականացնել շրջակա միջավայրի ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց վայրի և հաճախականության վերաբերյալ տեղեկությունը տրված է հայտի համապատասխան բաժնում:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան 590000 ՀՀ դրամ:

**Պարճառաբանական մաս.** օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Սյունիքի մարզի Գորայք բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:





**Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջների կատարումը:

**ԵՂՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ**

«Կառլին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսականի գլաքարային ավազի երևակման տարածքում 2024-2027թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան